ՄԱՅՐ ԱԹՈՌ Ա. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
Նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետ, հրաւէրով Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայոց թեմական Առաջնորդի, պիտի նախագահի Նիւ Եորքի նորակառոյց Մայր Տաճարի օծման արարողութիւններին Ապրիլի 28–ին եւ ապա իր Հայրապետական օրհնութիւնները պիտի բաշխի Մ. Նահանգաց եւ Գանատայի Հայոց Թեմերի մի շարք Եկեղեցական համայնքներին:

Վեհափառ Հայրապետը, իր ճանապարհի վրայ դէպի Մ. Նահանգներ, հրաւէրովը Վիեննայի Հայոց Եկեղեցական համայնքի վարչութեան, պիտի կատարի օծումը Վիեննայի Հայոց նորակառոյց Ս. Հռիփսիմէ Եկեղեցւոյն Ապրիլի 21–ին:

Նորին Սրբութիւնը, Յունիսի 15–ից յետոյ իր ուղեւորութիւնը պիտի շարունակի դէպի Հարաւային Ամերիկա, հրաւէրովը Հարաւ–Ամերիկայի Հայրապետական Պատուիրակին եւ Արժանտինի Հայոց Եկեղեցական կեդրոնական վարչութեան, իր օրհնութիւնը տանելու համար նաեւ այդ շրջանի իր հոգեւոր զաւակներին:

Սոյն ուղեւորութեան ընթացքին, Նորին Սրբութեան պիտի ուղեկցեն Գերշ. Տ. Կոմիտաս Եպս. Տէր–Ստեփանեան, Առաջնորդ թեմին Հայոց Վրաստանի, Հոգշ. Տ. Ներսէս Ծ. Վրդ. Պոզապալեան, տեսուչ հոգեւոր ճեմարանի եւ Պրն. Արքուն Հատիտեան, խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

Վեհափառ Հայրապետը իր շքախմբով կը մեկնի Ապրիլի 16–ին եւ կը վերադառնայ Մայր Աթոռ Յուլիս ամսի կէսերին:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
(ԿՆԻՔ)

Ս. Էջմիածին,
25 Մարտի 1968

digitised by A.R.A.R.@